Մարտունի

Բնակչության թիվը՝ 583

1921թ գարնանը Ալեքսան Տեր-Նիկողոսյանի գլխավորությամբ Մեծ Եղեռնից վերապրած 12 գաղթական ընտանիքներ,թվով 40 մարդ, Կրասնոսելսկ ավանից ոչ հեռու՝ Գետիկ գետի անտառաշատ ափին, հիմնադրում են Մարտունի գյուղը : 1921-23թթ գյուղը համալրվում է նոր գաղթական ընտանիքներով: 1921-30 թվականներին գյուղի բնակչության թիվը հասնում է 350-400-ի: Գյուղի հիմնադրումից երկու տարի հետո՝1923թ, բացվում է Մարտունի գյուղի դպրոցը, որն ուներ տարբեր տարիքի աշակերտներ:Դպրոցը սկզբում տարրական էր, այնուհետև՝ ութամյա, իսկ 1987թ, երբ կառուցվեց դպրոցի նոր շենքը, դարձավ միջնակարգ: 1993թ բարերար Շավարշ Խաչատրյանի նախաձեռնությամբ ու միջոցներով կառուցվել է ՝Սուրբ Ստեփանոս՝ մատուռը:
1977թ շահագործման է հանձնվել գյուղի մշակույթի տունը: 2010թ օգոստոսին շահագործման է հանձնվել Գետիկ գետի վրա կառուցված ՝Էրիկ՝ փոքր հիդրոէլեկտրոկայանը: Մարտունին ունի միջնակարգ դպրոց և բուժկետ: Բնակչությունն հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ: